



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 10/19**

30.04.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**)՝ քննարկելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Ռոբերտ Քոչարյանը (ներկայացուցիչ՝ Արամ Վարդևանյան, այսուհետ՝ Դիմող կամ Դիմումատու), 17.01.2019թ. դիմելով ՀՀ սահմանադրական դատարան, խնդրել է որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթում առկա ձևակերպման և իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանության և նույն օրենսգրքում վճռաբեկ վարույթում կալանքի քննության ընթացակարգային և կառուցակարգային երաշխիքների բացակայության արդյունքում խախտվում է ՀՀ Սահմանադրության 27-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներով նախատեսված իրավունքները:

Դիմողի դիրքորոշմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սահմանադրահիմնական վեճի առարկա հանդիսացող կարգավորումներում և նույն օրենսգրքի Գլուխ 48-ում՝ Վճռաբեկ դատարանի կողմից դրանք քննության առնելու մասով (ներառյալ վարույթ ընդունելու հիմնավորումներ, քննության սեղմ ժամկետների, ընթացակարգային այլ առանձնահատկություններ) առհասարակ առանձնահատկություններ առկա չեն, ինչի արդյունքում խաթարվում է անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված անձնական ազատության, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքները և այդ իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընացակարգերի ապահովման սահմանադրական պահանջը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության շրջանակներում դատարանի կողմից ընդունվող գործն ըստ էության չլուծող դատական ակտերի, մասնավորապես՝ կալանավորման մասով, որն անձի նկատմամբ կիրառվում է

կոնկրետ ժամկետով (չի կարող լինել երկու ամիս ավելի) ենթակա են բողոքարկման, սակայն դրանց քննությունը պետք է ունենա հստակ առանձնահատկություններ, այդ թվում՝ ժամկետային, ինչպես նաև բողոքարկման սուբյեկտների և հիմքերի, և երկամսյա ժամկետից հետո ընդունվող որոշումների առանձնահատկությունների առումով, հակառակ պարագայում այն կիմաստագրկի նշված ակտերի մարդու բողոքարկման սահմանադրական իրավունքը, իսկ վարույթ իրականացնող մարմնի կողմից բողոքարկելու դեպքում՝ կխաթարի արդյունավետ դատական պաշտպանության և անձնական ազատության իրավունքները:

Ըստ Դիմողի՝ ստեղծված իրավիճակը և նման իրավակիրառական պրակտիկան պայմանավորված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթի և առհասարակ նույն օրենսգրքի 48-րդ գլխում վճռաբեկ վարույթի շրջանակներում կալանավորման քննության մասով առանձնահատկությունների վերաբերյալ իրավունքի բացով:

Տվյալ պարագայում, ըստ Դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չեն նշված բացը լրացնելու որևէ իրավական երաշխիքներ: Օրենսդիրը նախատեսելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու համար երեք ամսյա ժամկետ: Նման իրավակարգավորման պայմաններում, ըստ Դիմողի՝ ստացվում է, որ կալանքի կիրառմանը վերաբերող վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կարող է կայացվել այն ժամանակ, երբ արդեն իսկ կալանքի երկամսյա ժամկետն ավարտված է: Իսկ վարույթ ընդունելու դեպքում կալանքի վերաբերյալ որոշում կայացնելու մասով առհասարակ որևէ ժամկետային կարգավորում առկա չէ և թողնված է վճռաբեկ դատարանի ամբողջական հայեցողությանը: Արդյունքում կալանքի վերաբերյալ բողոքարկման ինստիտուտը վճռաբեկ ատյանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանություններով վերածվում է պատրանքային և վերացական իրավունքի:

Դիմողը գտնում է, որ անհրաժեշտ է բացահայտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «նոր դատական ակտ կայացնելու» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, քանի որ վճռաբեկ դատարանը չի փորձել մեկնաբանել նշված եզրույթը:

Դիմողը գտնում է նաև, որ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հանգեցնում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրինականության սկզբունքի խախտման և նման մեկնաբանման արդյունքում Վճռաբեկ դատարանը դադարում է հանդես գալ որպես «օրենքի հիման վրա ստեղծված» դատարան, քանի որ վիճարկվող դրույթի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը վերազանցում է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակը՝ չի կայացնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դատական ակտը:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով նաև

համապատասխան դրույթների իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունները:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 419-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

2. Դիմողն ըստ էության բարձրացնում է անձին ազատությունից զրկելու օրինականության վիճարկման *habeas corpus* իրավունքի մասին հարց: Մասնավորապես, Դիմողը գտնում է, որ ընթացակարգի, կառուցակարգի և նյութաիրավական հիմքերի անորոշ կարգավորումն օրենսդրությամբ խախտում է Դիմումատուի *habeas corpus* իրավունքը՝ անկախ վարույթի արդյունքից:

3. Habeas corpus իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով, ըստ որի.

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

4. Habeas corpus իրավունքը սահմանված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով, ըստ որի.

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Այդ իրավունքն անձին տրամադրում է նվազագույն դատավարական երաշխիքներ, որոնք որպես կանոն գտնվում են արդար դատաքննության իրավունքի տիրույթում: Դրանք են, օրինակ, «դատարանի իրավունք», «օրենքի հիման վրա ստեղծված դատարան», «մրցակցային դատավարություն», «լսված լինելու իրավունք», «անմեղության կանխավարկած» (ապացուցման բեռի բաշխման անթույլատրելիություն), «արագորեն որոշում կայացնելու» կամ, այլ կերպ ասած, «վարույթն արագորեն իրականացվելու» իրավունք և մի շարք այլ դատավարական հիմնարար իրավունքներ (Նախմանովիչն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 55669/00, ՄԻԵԴ, 2/3/2006, § 83): Ընդ որում, թեև Կոնվենցիան չի տրամադրում բողոքարկման իրավունք 5-րդ հոդվածի 4-մասի ներքո, քանի որ Կոնվենցիայի տեքստում օգտագործվում է «վիճարկել»>, այլ ոչ թե բողոքարկել

արտահայտությունը, սակայն եթե պետությունը ստեղծել է բողոքարկման մեխանիզմներ, պարտավոր է «կալանավորին տրամադրել այն նույն երաշխիքները, ինչ առաջին արյանում» (Պողոսյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 44068/07, 20/12/2011, § 77):

6. Կենտրոնը համամիտ է դիմումատուի հետ առ այն, որ վեճի առարկա հոդվածը անորոշ կերպով է կարգավորում habeas corpus ընթացակարգը, որի արդյունքում կալանավորը իր իրավունքն իրացնելիս հայտնվում է իրավական անորոշության առջև առնվազն երեք հիմքերով: Առաջին, նրա համար անորոշ է բողոքարկման ընթացակարգի տևողությունը, որի պատճառով խախտվում է բողոքն արագորեն քննվելու անձի իրավունքը, երկրորդ, բողոքը վարույթ ընդունելու սահմանված առավելագույն ժամկետը չափազանց երկար է, որն առարկայազուրկ է դարձնում habeas corpus ընթացակարգը որպես իրավական պաշտպանության միջոց, երրորդ, օրենսդրական նորմի և դատական նախադեպի հակասության պատճառով ստեղծվել է անորոշություն դատական Վճռաբեկ դատարանի կողմից դատական ստուգման բնույթի և շրջանակների վերաբերյալ:

Ա. Վարույթն արագությամբ (սեղմ ժամկետներում) իրականացնելու պահանջը

7. Հայտնի է, որ կալանավորման օրինականության վիճարկման վարույթի արագությունը ինքնուրույն իրավունք է *habeas corpus* ընթացակարգի ներքո (Մուսիալն ընդդեմ Լեհաստանի (ՄՊ), թիվ 24557/94, 25/03/1999, § 43): Եվրոպական դատարանի պրակտիկայում անիրավաչափ է համարվել *habeas corpus* ընթացակարգի 17-օրյա տևողությունը (Կադեմն ընդդեմ Մալթայի, թիվ 55263/00, 9/01/2003, § 45), 36, 26, 36, 29 չորս առանձին ժամկետներով կալանավորման դատական ստուգման տևողությունը (Մամադովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 7064/05, 01/06/2006, § 96), և վերաքննիչ դատարանի կողմից 14 օրվա ընթացքում բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու դատական ստուգման վարույթի տևողությունը (Խադարկովսկին ընդդեմ Ռուսաստանի, թիվ 5829/04, 31/05/2011, § 233): Մինչդեռ, վիճահարույց իրավակարգավորումը թույլ է տալիս Վճռաբեկ դատարանին բողոքին անդրադառնալ մի քանի ամսվա ընթացքում, որն ինքնին անհարիր է վերը շարադրված Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին և, ընդհանրապես, արագության հասկացությանը բառի կամ երևույթի սովորական, առօրյա իմաստով:
8. Բողոքն արագորեն քննելու պետության անվերապահ պարտականությունը և քաղաքացու հիմնարար իրավունքը պայմանավորված են այն հանգամանքով, որ քանի դեռ անձը գտնվում է անազատության մեջ, վարույթն իրականացնող մարմինները կրում են պարտականություն, որ կալանավորման հետ կապված բոլոր վարույթները, այդ թվում նաև բողոքարկման ընթացակարգերը, արագորեն իրականացվեն, որ անձը որքան հնարավոր է կարճ տևողությամբ մնա անազատության մեջ, եթե կալանքն անօրինական է (Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով) կամ անողջամիտ է (5-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով):: Այս

մոտեցումը բխում է այն ընդհանուր գաղափարից, որ անձի ձերբակալման ու կալանավորման հետ կապված բոլոր երաշխիքները, այդ թվում նաև ընթացակարգային, կառուցակարգային և նյութաիրավական, պետք է մեկնաբանվեն ու կիրառվեն **անձի ազատության կանխավարկածի** լույսի ներքո: Դա է պատճառը, որ դատական ստուգման վարույթի արագության պահանջի ցանկացած սահմանափակում պետք է նեղ մեկնաբանության ենթարկվի (*Խլաֆիան ու այլոք ընդդեմ Իտալիայի* (ՄՊ), թիվ 16483/12, 15/12/2016, § 131):

9. Կենտրոնը համակարծիք է Դիմումատուի հետ առ այն, որ ընթացակարգի տևողությունը անորոշ է կարգավորված օրենքով, որը ստեղծում է իրավական անորոշություն քաղաքացու կողմից բողոքարկման իր իրավունքն արագորեն իրացնելու իր իրավունքն իրականացնելու համար:
10. Անկասկած է, որ կալանավորման բողոքարկման բոլոր ընթացակարգերը, այդ թվում նաև նյութաիրավական հիմքերը, պետք է լինեն օրինական: Օրինականության անբաժանելի տարր է հանդիսանում իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը, որը Կոնվենցիայի ունիվերսալ սկզբունք է, առկա է Կոնվենցիայի բոլոր հոդվածներում և հանդիսանում է օրենքի գերակայության վրա հիմնված պետության հիմնարար հատկանիշ (*Բեյանն ընդդեմ Ռումինիայի*, թիվ 30658/05, 06/12/2007, § 39): Կոնվենցիայով սահմանված ցանկացած իրավահարաբերություն, այդ թվում նաև անձնական ազատության բոլոր երաշխիքները, պետք է հստակորեն ու կանխտեսելիորեն կարգավորված լինեն ազգային օրենքներով
11. Վարդան Մինասյանի գործով վճռում եվրոպական դատարանը կատարել է հետևյալ եզրահանգումը.

«Եթե խոսքը վերաբերում է ազատությունից զրկելուն, հատկապես կարևոր է, որ իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը բավարարվի: Հերևաբար, էական է, որ անձին ազատությունից զրկելը հստակորեն սահմանված լինի ներպետական օրենքում, և որ օրենքը կիրառելիս ինքնին լինի կանխատեսելի՝ այնպես, որ համապատասխանի <<օրինականության>> կոնվենցիոն չափանիշին՝ մի չափանիշ, որը պահանջում է, որ բոլոր օրենքները լինեն բավականաչափ ճշգրիտ, որպեսզի հնարավորություն տան անձին, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդավորություն ստանալով, կանխատեսել, տվյալ հանգամանքների ներքո ողջամտության շրջանակներում, այն հետևանքները, որ տվյալ գործողությունը կարող է հանգեցնել» (Մինասյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 44837/08, 08/04/2014, § 51):

12. Ըստ այդմ, իրավական որոշակիության ընդհանուր պահանջին պետք է բավարարեն ոչ միայն անձին ազատությունից զրկելու հիմքերը և ընթացակարգերը

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի ներքո (*Ջեսիուսն ընդդեմ Լիպվայի*, թիվ 34578/97, 31/07/2000, § 53), այլ նաև կալանավորման օրինականության բողոքարկման ընթացակարգերը 5-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո, որոնք որպես իրավական պաշտպանության միջոցներ պետք է լինեն **«բավարար չափով հստակ, քանի որ հակառակ դեպքում իրավական պաշտպանության միջոցը մարչելիության և արդյունավետության պահանջները չեն բավարարվի»** (Կադեմն ընդդեմ Մալթայի, թիվ 55263/00, 9/01/2003, § 41):

13. Այն հանգամանքը, որ օրենսդիրը Վճռաբեկ դատարանի վարույթում բողոքարկման ընթացակարգի համար չի սահմանում բողոքը քննելու ժամկետային հստակ կարգավորումներ, Վճռաբեկ դատարանին օժտում է բացարձակ հայեցողությամբ:
14. Իրավական որոշակիության սկզբունքի ներքո հայեցողության իրավունքը չի կարող լինել բացարձակ, ըստ այդմ՝ անվերահսկելի ու անկառավարելի, այլ պետք է ուրվագծվի որոշ շրջանակներով, հիմքերով, կարգավորումներով ու սահմանափակումներով՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ապահովելու համար մի կողմից քաղաքացիների համար իրենց իրավունքներից օգտվելիս կանխատեսելիություն, իսկ մյուս կողմից՝ դատական գործառույթների արդյունավետություն՝ պահմանավորված արդարադատության շահով:
15. Դա նշանակում է, որ տվյալ իրավահարաբերության շրջանակներում գործ ունենք մասնավոր ու հանրային մրցակցող լեգիտիմ շահերի հետ, որոնք անհրաժեշտ է արդարացիորեն փոխհավասարակշռել համաչափության սկզբունքի կիրառմամբ՝ Սահմանադրության 78-րդ հոդվածի ներքո: Հետևաբար, պետք է տեսնել, թե արդյոք վիճահարույց հոդվածով այդ շահերը արդարացիորեն փոխհավասարակշռված են:
16. Օբյեկտիվորեն, մրցակցող լեգիտիմ շահերը արդարացիորեն փոխհավասարակշռված են, եթե կիրառված միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն: Տվյալ դեպքում միջոցը Քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընթացակարգային կարգավորումներն են, համաձայն որի որևէ ժամկետ չի սահմանված վճռաբեկ դատարանի կողմից բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար դիմումը վարույթ ընդունելուց հետո, իսկ նույն հոդվածի՝ մեկ այլ հոդվածի հետ համակարգային ամբողջության պարագում վճռաբեկ դատարանը պարտավոր է վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կայացնել երեք ամսվա ընթացքում:
17. Ինչ վերաբերում է կարգավորման իրավաչափ նպատակին, ապա դատավարական ժամկետների կիրառումը սովորաբար հետապնդում է դատավարության ընթացքի կայունության, իրավական որոշակիություն ապահովելու նպատակ¹, որպեսզի և՛ դատարանները կարողանան իրականացնել իրենց գործառույթները և ապահովեն

¹ ՍԴՈ-1052, կետ 7-8:

դատական արդյունավետ պաշտպանություն, և՛ դատավարության մասնակիցները իրականացնեն դատարանի և դատարանի մատչելիության իրենց հիմնարար իրավունքները, որպեսզի կարողանան արդյունավետ կերպով վիճարկել կալանավորման անօրինականությունը:

18. Նման պարագայում, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումների համաձայն, դատավարական ժամկետների՝ որպես միջոցների, մի կողմից, և մյուս կողմից դատարանի մատչելիության՝ որպես իրավաչափ նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, եթե անձն ունի **իրագործելի, հստակ և գործնական հնարավորություն** բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը, եթե ընթացակարգերը **չեն խաթարում** ընթացակարգով սպասարկվող իրավունքի բուն էությունը, տվյալ դեպքում կալանավորման օրինականության բողոքարկման *habeas corpus* իրավունքը, եթե ընթացակարգը դիմումատուին չի ծանրաբեռնում ավելորդ ձևական պահանջներով՝ ծայրահեղ ֆորմալիզմով, և եթե միևնույն ժամանակ չափազանց ճկուն մոտեցումը վճարել գանգատին առաջադրվող պահանջները չի դարձնում անհմաստ:²
19. Վերը նշվածի լույսի ներքո Կենտրոնը գտնում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը համաչափ չէ հետապնդող իրավաչափ նպատակի համեմատ: Ինչպես արդեն նշվել է, Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված *habeas corpus* իրավունքի նպատակը անձին սեղմ ժամկետներում (արագորեն) կալանավորման օրինականությունը վիճարկելու հնարավորություն ապահովելն է: Այս նպատակի լույսի ներքո, անհամաչափ իրավակարգավորում է, որ օրենսդիրը Վճարել դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելու համար սահմանել 3-ամսյա ժամկետ, իսկ բողոքի հետագա քննության համար ժամկետային որևէ սահմանափակում չի սահմանել:
20. Մինչ այժմ որևէ ողջամիտ բացատրություն օրենսդրի կողմից չի տրամադրվել, թե որ իրավաչափ նպատակով էր պայմանավորված նման երկար ժամկետի սահմանումը վարույթ ընդունելու հարցը լուծելու համար: Որևէ ողջամիտ բացատրություն չի ներկայացվել նաև, թե ինչու որևէ ժամկետ չի սահմանվել դիմումը վարույթ ընդունելուց հետո բողոքին լուծում տալու համար: Ավելին, Քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասը մինչև այժմ չի մեկնաբանվել Սահմանադրական դատարանի կամ Վճարել դատարանի կողմից այն իմաստով, թե արդյոք հոդվածով սահմանված ժամկետային կարգավորումը համապատասխանում է դատական ստուգման իրավունքի նպատակին ու առարկային, կամ թե արդյոք հոդվածը տրամադրում է իրագործելի, հստակ ու գործնական հնարավորություններ անազատության ցանկացած դրևորում, այդ թվում նաև խափանման միջոց կալանավորման օրինականությունը բողոքարկելու համար:

² Նույն տեղում

21. Առանձահատուկ ուշադրության է արժանի սույն կարգավորման համեմատական վերլուծությունը միջազգային նորմերի հետ: Ինչպես արդեն նշվել է սույն բաժնի սկզբում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դատական ստուգման 14, 17, 26, 29 և 36-օրյա ժամկետները համարել է habeas corpus կառուցակարգին հակասող: Մինչդեռ 2007 թվականի ապրիլից մինչև 2018 թվականի հունիս ամսվա ժամանակաընթացքում ձևավորված դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու ժամանակահատվածի միջին տևողությունը 80 օր է, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և վերջնական որոշում կայացնելու ժամանակահատվածի միջին տևողությունը 59 օր է, իսկ վճռաբեկ բողոք ներկայացնելու և դիմումի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու ընդհանուր տևողության միջին ժամկետը 140 օր է: Այս ժամկետները ինքնին անողջամիտ են՝ համեմատած բողոքը սեղմ ժամկետում քննելու իրավունքի պահանջի հետ:
22. Քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը հակասում է նույնիսկ Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշմանը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կալանավորման դատական ստուգման ժամկետների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում Քրեական վերաքննիչ դատարանի կողմից բողոքի քննության մի քանի օրվա ձգձգումները համարել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասին հակասող և դրանք համարել քրեադատավարական էական բնույթի խախտումներ (*Անուշ Ղավայանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը ԵԿԴ/0225/06/08 քրեական գործով որոշումը: Տե՛ս կետ 26-ում և 27-ում):
23. Կարևոր ենք համարում նշել, որ սույն խնդիրը ներկայումս գտնվում է եվրոպական դատարանի ուշադրության կենտրոնում և որպես համակարգային խնդիր քննության առարկա է *Անդրեաս Ղուկասյանն ընդդեմ Հայաստանի* գործով: Սույն գանգատը հաղորդակցվել է ՀՀ կառավարությանը 2018 թվականի նոյեմբերի 21-ի, որում դատարանը ՀՀ իշխանություններին ուղղել է հետևյալ հարցը.

«Արդյոք Վճռաբեկ դատարանում վարույթների տևողությունը, որոնք հարուցվել են 2016 թվականի սեպտեմբերի 14-ին, նոյեմբերի 7-ին և նոյեմբերի 22-ին, 2017 թվականի հունվարի 31-ին, մարտի 13-ին, մայիսի 21-ին, հուլիսի 17-ին և դեկտեմբերի 18-ին, որոնց շրջանակներում դիմումատուին փորձում էր վիճարկել Վերաքննիչ քրեական դատարանի որոշումները, որոնցով հաստատվել էին կալանավորման մասին որոշումները, համապատասխանում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի «արագության» պահանջին»:³

³ Անդրիաս Ղուկասյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 5195/17, 21/11/2018թ. որոշում գանգատը հաղորդակցելու մասին: Տե՛ս ՀՀ կառավարությանն ուղղված հարցերի ցանկը որոշման վերջում. հարց 3-րդ: Որոշման ամբողջական տեքստը անգլերեն լեզվով հասանելի է հետևյալ հղումով. <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-192096>

24. Նշվածը նույնությամբ այն հարցն է, որը մենք բարձրացնում ենք վերևում, նշելով, որ Վճռաբեկ դատարանում կալանավորման օրինականության բողոքարկման վարույթի օրենսդրական կարգավորումը չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի «արագության» պահանջին, քանի որ անհամաչափորեն երկար է: Քաջատեղյակ լինելով ՄԻԵԴ-ի պրակտիկային ու համապատասխան նյութափրավական և ընթացակարգային հիմքերին, վստահաբար կարելի է պնդել, որ ՄԻԵԴ-ը և՛ օրենսդրական կարգավորման մեջ, և՛ պրակտիկայում Անդրեաս Ղուկասյանի գործով նկատել է համակարգային լուրջ խնդիր, հակառակ դեպքում գանգատը այդ հիմքով չէր հաղորդակցի ՀՀ իշխանություններին:
25. Այսպիսով, կալանավորման դատական ստուգման ժամկետի թերի կարգավորումը հանգեցնում է դատական ստուգման վարույթի տևողության անորոշությանը բողոքարկուների համար: Բողոքարկուների համար միայն որոշակի է, որ երեք ամսվա ընթացքում Վճռաբեկ դատարանը պետք է կայացնի դիմումը վարույթ ընդունելու կամ մերժելու մասին որոշում: Այս կարգավորումը թեև սահմանում է ժամկետի «առաստաղ»՝ առավելագույն ժամկետ, սակայն միևնույն ժամանակ տալիս է լայն հայցեղություն այդ ժամկետի ընթացքում դիմումի ընդունելիության հարցը լուծելու համար:
26. Միևնույն ժամանակ, 3-ամսյա ժամկետն ինքնին անհամաչափորեն երկար ժամկետ է՝ համեմատած դատական ստուգման վարույթի իրականացման արագության պահանջի հետ, որը դատական ստուգման իրավունքի առարկան է:
27. Ինչ վերաբերում է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո վարույթի տևողությանը, այն փաստը, որ այդ փուլը ժամկետային որևէ սահմանափակման չի ենթարկվում, ինքնին անորոշ իրավիճակ է, որը որպես այդպիսին նույնպես հակասում է դատական ստուգման իրավունքի առարկային ու նպատակին, մասնավորապես՝ վարույթն արագորեն իրականացնելու հիմնարար իրավունքին:
28. Ի մի բերելով վերը նշվածը, Կենտրոնը գտնում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի ժամկետային կարգավորումները անհամաչափ են իրավաչափ նպատակի համեմատ, որն է դատավարական ընթացակարգի կայունության և որոշակիության ապահովումը, և որպես այդպիսին չի բավարարում *habeas corpus* ընթացակարգի՝ որպես իրավական պաշտպանության միջոցի **արդյունավետության** և **մատչելիության** պահանջները՝ ըստ վերը նշված նախադեպային դրույթի:

Բ. Իրավունքի իմաստագուրկ լինելը

29. Վերևում արդեն նշվել է, որ դիմումը վարույթ ընդունելու կամ մերժելու 3-ամսյա ժամկետը անհամաչափորեն երկար ժամկետ է, եթե համեմատենք այդ ժամկետը կալանավորման՝ օրենքով սահմանված առավելագույն 2-ամսյա ժամկետի հետ:

Պրակտիկայում հաճախ պատահում են դեպքեր, որ բողոքարկվող կալանքի ժամկետը լրանում է և առաջին ատյանի դատարանը կայացնում է կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին որոշում մինչև Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի քննելը և որոշում կայացնելը: Ըստ եվրոպական դատարանի, նման հանգամանքում նույնիսկ եթե Վճռաբեկ դատարանը բավարարի բողոքը, դա **որևէ ազդեցություն չի ունենա այն ժամկետի վրա**, որն անձը անցկացրել է անազատության մեջ Վճռաբեկ դատարանի կողմից դիմումը ուշացումով քննելու արդյունքում (*Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, (գանգատ թիվ 629/11, 11/01/2018, § 61):

30. Եվրոպական դատարանը նման երևույթի անդադարձել է նաև Վերաքննիչ քրեական դատարանի կողմից բողոքը ուշացումով քննելու փաստերի շրջանակում, որի առնչությամբ նույնպես որոշել է, որ ուշացումը հանգեցրել է կալանավորման օրինականության դատական ստուգման՝ որպես իրավական պաշտպանության միջոցի մերժմանը (*denial of judicial review*), որն այլ կերպ կարելի է մեկնաբանել որպես դատարան դիմելու արդյունավետ հնարավորությունից կամ, ընդհանրապես, դատարանի իրավունքից զրկում (*Պողոսյանն ընդդեմ Հայաստանի*, վկայակոչված վերևում, § 80: *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 33376/07, §§ 125-127: *Մինասյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 44837/08, 08/04/2014, § 76):
31. Ըստ սահմանադրական դատարանի՝ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու արդյունավետ իրացման հնարավորությունը, **իմաստագրկել** ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսալ⁴: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվման ենթակա կալանավորման ժամկետի ավարտից հետո որոշումը կայացնելը, նույնիսկ բարենպաստ ակտի դեպքում, իմաստագրկում է *habeas corpus* իրավունքը որպես իրավական պաշտպանության միջոց, ու դա հնարավոր է դառնում խնդրո առարկա օրենսդրական կարգավորման պատճառով:
32. Այսպիսով, վիճահարույց կարգավորմամբ ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ կալանավորման դատական ստուգման *habeas corpus* կառուցակարգը իմաստագրկվում է, իսկ դրա հիմքում ընկած իրավունքը որպես իրավական պաշտպանության միջոց դառնում առարկայազուրկ: Այդ իմաստով՝ **վիճահարույց հոդվածի ժամկետայի կարգավորումները անհամաչափ են իրավաչափ նպատակի համեմատ:**
33. Եթե իրավաչափ նպատակը կամայականության ու խախտումների դեմ արդյունավետ երաշխիքի տրամադրելն է, ապա այդ երաշխիքը չի կարող իմաստագրկվել որևէ հանգամանքում, քանի որ *habeas corpus* իրավունքը անօտարելի իրավունք է: Մինչդեռ տվյալ դեպքում այդպիսի իրավիճակը

⁴ ՍԴՈ-1334, էջ 13:

ստեղծվում է, երբ բողոքի քննության ժամկետը գերազանցում է կալանավորման ժամկետը: Այսինքն, բացակայում է ռացիոնալ կապը միջոցի՝ օրենսդրական կարգավորման, և նպատակի՝ իրավական պաշտպանության միջոցի արդյունավետության միջև: Հետևաբար, օրենսդրական կարգավորմը անիրավաչափ է և հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի, Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի, և 78-րդ հոդվածի նպատակին ու առարկային:

Գ. Դատական ստուգման շրջանակը և բնույթը

34. Վերևում արդեն նշվել է, որ կալանավորման դատական ստուգման կառուցակարգը, օրենսդրական կարգավորումը և ընթացակարգը չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին:
35. Այդ նույն լույսի ներքո Կենտրոնը համամիտ է դիմումատուի այն եզրահանգումների հետ, որ Քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված «նոր դատական ակտ» եզրույթն անորոշ է այն իմաստով, որ առկա է հակասություն օրենսդրական նորմի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի միջև:
36. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավական անորոշությունը ծագում է ոչ միայն օրենսդրական նորմի անհստակության արդյունքում, այլ նաև օրենսդրական նորմի և դատական նախադեպի միջև հակասության դեպքում, որը կարող է հիմք հանդիսանալ, որ տվյալ օրենսդրական դրույթը չհամապատասխանի կանխատեսելիության պահանջին (*Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 6562/03, 11/01/2007, §j 39):
37. Գանգատում դիմումատուն վկայակոչել է Վճռաբեկ դատարանի երկու որոշումներ (դիմումատուի գործով 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշումը և «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշումը), որոնցով տրված մեկնաբանության համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում «նոր դատական ակտ» եզրույթը պետք է մեկնաբանել այնպես, որ Վճռաբեկ դատարանը կարող է կայացնել նաև, *inter alia*, բողոքը մասնակիորեն բավարարելու և վճռաբեկ բողոքը և գործը վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու մասին որոշում:
38. Այդ մեկնաբանությունը հակասում է հոդվածի տեքստին ու դրա իրավական բովանդակությանը: Կենտրոնը համամիտ է Դիմումատուի հետ առ այն, որ 419-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրված է հստակորեն և որևէ իմաստային անորոշություն չի առաջացնում: Հոդվածով սահմանված կարգավորման նպատակն է, որ վճռաբեկ դատարանը արագորեն, սեղմ ժամկետում կայացնի դիմումի վերաբերյալ վերջնական որոշում՝ մերժելով կամ բավարարելով դիմումը, այլ ոչ թե մասնակի բավարարի և գործն ուղարկի վերաքննիչ դատարան *de novo* քննության՝ այդպիսով

երկարաձգելով վարույթը, որը կհակասի *habeas corpus* ընթացակարգի արագության գաղափարին ու պահանջին:

39. ՀՀ վճռաբեկ դատարանն ունի հատուկ սահմանադրական առաքելություն՝ ապահովելու օրենքների միատեսակ կիրառությունը: Օրենքների միատեսակ կիրառության ապահովումը կոչված է ապահովելու իրավական որոշակիություն դատաիրավական պրակտիկայում, որն օրենքի գերակայության պահանջ է: Մինչդեռ, իրավական որոշակիություն ապահովելու փոխարեն տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն ինքն է կարծես վերածվել իրավական անորոշության աղբյուրի:
40. Նույնանման հանգամանքի անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային իրավունքում: Օրինակ, Ռումինիայի վճռաբեկ դատարանի հակասական ու անորոշ նախադեպային որոշումների առնչությամբ, վերահաստատելով, որ իրավական որոշակիության սկզբունքը առկա է Կոնվենցիայի բոլոր հոդվածներում, հետևաբար, ունիվերսալ սկզբունք է և հանդիսանում է օրենքի գերակայության վրա հիմնված պետության հիմնարար հատկանիշներից մեկը, եզրահանգել է, որ վճռաբեկ դատարանը, որը կոչված էր ապահովել իրավական որոշակիություն, ինքն էր վերածվել իրավական անորոշության աղբյուրի՝ այդպիսով խարխլելով հասարակության վստահությունը դատական համակարգի նկատմամբ (*Բեյանն ընդդեմ Ռումինիայի*, թիվ 30658/05, 06/12/2007, § 39): Տվյալ դեպքում Ռումինիայի վճռաբեկ դատարանը իրավունքի մասին նույն (ոչ թե նույնանման) հարցի վերաբերյալ տևական ժամանակ կայացնում էր տրամագծորեն հակառակ որոշումներ՝ երբեմն նույն օրվա ընթացքում (*Բեյանն*, § 36): Ըստ Եվրոպական դատարանի՝ «անորոշությունը – օրենսդրական, վարչական թե դատական – կարևոր գործոն է, որ պետք է հաշվի առնել գնահատելու համար Պետության վարքագիծը» (*Բեյանն*, կետ § 33): Արդյունքում, դատարանը արձանագրեց արդար դատաքննության իրավունքի խախտում վճռաբեկ դատարանի հակասական նախադեպային որոշումների պատճառով:
41. Այս լույսի ներքո, մենք համաձայն ենք դիմումատուի ներկայացուցչի հետ, որ վիճահարույց նորմի նման մեկնաբանումը և կիրառումը հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված որոշակիության սկզբունքի և 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի ոչ իրավաչափ միջամտումներին՝ վերջինը դիտարկելով որպես 27-րդ հոդվածի 5-րդ մասի համար *lex generalis norm*:
42. Այսպիսով, Վճռաբեկ դատարանի հակասական որոշումների արդյունքում ստեղծվել է անորոշություն վճռաբեկ դատարանի դատական ստուգման **բնույթի** և **շրջանակների** առնչությամբ:
43. Դատական ստուգման բնույթը և շրջանակները իրավական կատեգորիաներ են, *habeas corpus* կառուցակարգի հատկանիշներ, որոնցով պայմանավորված է

դատական ստուգման՝ որպես իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը: Բնականաբար, դատական ստուգման շրջանակները կանխորոշում, ուրվագծում են դատական ստուգման բնույթը:

44. Նմանապես, դատական ստուգման բնույթը և շրջանակները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության ընդհանուր պահանջին, որպեսզի դրանք ապահովեն կանխատեսելիություն և լինեն օրինական: Այսինքն, դատական ստուգման բնույթը և շրջանակները պետք է հստակորեն ամրագրված լինեն օրենքում կամ նախադեպային իրավունքում:
45. Եթե դատական ստուգման բնույթը ծայրահեղ ֆորմալիզացված է, հնարավորություն չի տալիս դատական ստուգման ենթարկել բողոքարկուի ներկայացրած փաստեր, հանգամանքներ ու ապացույցներ, որոնք հիմնավորում են, որ, օրինակ, փախուստի դիմելու, քրեական գործի քննությանը խոչընդոտելու, նոր հանցագործություն կատարելու վտանգը նվազագույն է կամ բացակայում է, ու դրա փոխարեն դատարանները քննում են միայն այնպիսի հարցեր, թե արդյոք դատախազի կամ քննիչի կողմից ապահովվել են քրեադատավարական ընթացակարգային պահանջները, կամ թե արդյոք արարքի քրեաիրավական որակումը ճիշտ է տրված, դատական ստուգման նման բնույթը և շրջանակները չեն համապատասխանում եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին (*Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 31195/96, 25/03/1999, § 61: *Տիմոշենկոն ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 49872/11, 30/04/2013, § 278):
46. Նմանապես, եթե դատական ստուգման շրջանակը անորոշ է, օրինակ, երբ անորոշ է, թե արդյոք դատարանը դատական ստուգման վարույթում կարող է քննության առարկա դարձնել խափանման միջոց կալանավորման պայման հանդիսացող հիմնավոր կասկածի մասին հարցը նախաքննության ուշ փուլում (*Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 33376/07, 26/06/2012, § 122), թե արդյոք վերաքննիչ դատարանը կարող է քննել առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված բողոքը, երբ նախաքննության արդեն ավարտվել է և քրեական գործն ուղարկվել է դատարան (*Պողոսյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 44068/07, 20/12/2011, § 80), թե արդյոք դատական ստուգում իրականացնող դատարանը կալանավորման անօրինականությունը հաստատելով հանդերձ իրավունք ունի նաև հրահանգել ազատ արձակել կալանավորին (*Կադեմն ընդդեմ Մալթայի*, թիվ 55263/00, 9/01/2003, § 42), կամ թե արդյոք դատական ստուգման առարկա կարող է հանդիսանալ դատական քննության փուլում ընտրված խափանման միջոց կալանքի դեմ բերված բողոքը (*Տիմոշենկոն ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 49872/11, 30/04/2013, § 278), նման անորոշությունը հանգեցնում է դատական ստուգման արդյունավետ իրականական պաշտպանության միջոցի իրավունքի խախտմանը:
47. Քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածը հստակորեն կանոնակարգում է դատական ստուգման բնույթը և շրջանակները ըստ էության լուծող և ըստ էության չլուծող դատական ակտերի համար՝ դրանք հստակորեն տարանջատելով և առանձին-առանձին սահմանելով դրանց հատկանիշները:

48. Իրավական որոշակիության պահանջներին բավարարող ձևակերպումներով օրենսդիրը հստակորեն սահմանել է դատական ստուգման երկու առանձին շրջանակներ ըստ էության լուծող և ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման առնչությամբ՝ առաջինի համար սահմանելով բողոքն ամբողջությամբ ընդունելու կամ մերժելու, կամ մասնակիորեն բավարարելու և բեկանված մասով քրեական գործը վերաքննիչ դատարան ուղարկելու գործառույթներ ու ընթացակարգեր, իսկ երկրորդի համար սահմանելով դատական ստուգման առավել նեղ շրջանակ՝ բողոքը ամբողջությամբ մերժելու կամ «նոր դատական ակտ» կայացնելու մասին՝ բացառելով բողոքը ստորադաս ատյան ուղարկելու ընթացակարգ, որը կհակասեր քննությունը սեղմ ժամկետներում իրականացնելու պահանջին և հիմնարար իրավունքին:
49. Վճռաբեկ դատարանի՝ դիմումատուի վերաբերյալ կայացված որոշումով, որում վկայակոչվել է վճռաբեկ դատարանի մեկ այլ որոշում, օրենսդրական նորմին տրվեց այլ իրավական բովանդակություն, որը հակասում է օրենսդրական նորմի իրավական բովանդակությանը: Ազգային օրենսդրության հետ նախադեպային իրավունքի առերևույթ անհամապատասխանությունը հիմք է, որ օրենքը համարվի անորոշ և անկանխատեսելի Կոնվենցիայի ներքո (*Բակլանովն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 68443/01, 09/06/2005, § 46: *Մկրտչյան*, վկայակոչված վերևում, § 39):
50. Ըստ էության, իրավական պրակտիկայում ներկայումս առկա է երկու հակասական կարգավորում: Ըստ օրենսդրական նորմի, Վճռաբեկ դատարանը բողոքի քննության արդյունքում չի կարող բողոքը մասամբ բավարարել և բեկանված մասով բողոքը ուղարկել ստորադաս ատյան նոր քննության, մինչդեռ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ նման ընթացակարգային որոշում Վճռաբեկ դատարանը կարող է կայացնել: Այսինքն, ստեղծվել է իրավական անորոշություն օրենսդրական նորմի և նախադեպային դրույթի միջև և նման իրավիճակն անընդունելի է, *mutatis mutandis*, մարդու իրավունքների միջազգային նորմերում՝ այդ թվում նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներքո (*Բեյան*, § 33):

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

Առկա խնդիրները պայմանավորված են օրենսդրության անկատարությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բողոքի քննության ժամկետային կարգավորումներն անորոշ են, անարդարացիորեն երկարատև, հակասում են անազատության դեմ բերված բողոքն արագությամբ քննելու իրավունքին, դատական ստուգման իրավունքը դարձնում իմաստազուրկ, իսկ որպես իրավական պաշտպանության միջոց՝ անարդյունավետ: Որպես այդպիսին, օրենսդրական նորմի շրջանակներում մասնավոր ու հանրային շահերն արդարացիորեն փոխհավասարակշռված չեն:

Դատավարական ընթացակարգի որոշակիության իրավաչափ նպատակի համեմատ բողոքի քննության ժամկետային կարգավորումներն առերևույթ անհամաչափ են: Եվ վերջապես, հոդվածը որոշակիորեն չի կարգավորում դատական ստուգման բնույթը և շրջանակները, քանի որ դրանց վերաբերյալ առկա են հակասական օրենսդրական և նախադեպային կարգավորումներ: Վերը նշված խնդիրները չեն ապահովում կամայականության ու խախտումների դեմ բավարար ու արդյունավետ երաշխիքներ:

Հ.Գ. Սույն հարցը քննարկվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նիստում և կարծիքն ընդունվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 30.04.2019թ. թիվ 8/14-Ա որոշմամբ:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան